

2018 թվականի ընթացքում Մեծամորի համայնքապետարանի կողմից  
իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

Իրականացվել են Ներհամայնքային ճանապարհների մասնակի նորոգման և ասֆալտապատման, բակերի բարեկարգման աշխատանքներ, տեղադրվել է բետոնե եզրաքարեր մայթերին, խաղահրապարակներում և կանաչապատ տարածքներում, իրականացվել են բազմաբնակարան շենքերի տանիքների և անձրևատար խողովակների մասնակի վերանորման աշխատանքներ /1թղմ 24շ, 8բ1շ, 2բ, 5բ, 2թղմ 1բ/

Կատարվել է բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի մասնակի վերանորոգում /1թղմ 1, 2, 3, 6, 8, 9, 11, 11գ, 12, 13ա, 14, 14գ, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 30, 31, 32, 2 թղմ. 1շենքեր/

Բազմաբնակարան շենքեր խմելու ջրագծի մասնակի վերանորոգում /1թղմ 1, 4բ1, 4բ2, 8, 11, 18, 2թղմ. 2բ շենքեր/

Իրականացվել է բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների և պատուհանների տեղադրում /1թղմ. 4բ1, 4բ2, 5բ1, 6բ1, 10, 19, 20, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 2թղմ. 1բ 1, 2,

Կազմակերպվել է Համայնքի կանաչապատ տարածքների ընդլայնման, ոռոգման ջրագծի մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 250 գծմ ինչպես նաև իրականացվել է ծառատունկ,

Մեկնարկվել է Մեծամոր համայնքի 1-ին մանկապարտեզի կապիտալ նորոգման աշխատանքները

Վերանորոգվել է Մեծամոր համայնքի 3-րդ մանկապարտեզի խմելու ջրի ջրագիծը իրականացվել է Մեծամոր համայնքի Երևան- Արմավիր ճանապարհի կանգառների լուսավորում, կանգառներում տեղադրվել են սպասասրահներ

Ներհամայնքային այգիներում խաղահրապարակներում բակերում տեղադրվել են աղբամանների և նստարաններ

Իրականացվել է բարձրահարկ շենքերի վերելակների շարժիչներ վերանորոգում

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված հայտերի հիման վրա կառուցապատողներին տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանքներ (կամ նախագծման թույլտվություն), շինարարության (քանդման) թույլտվություններ, օրենքով սահմանված կարգով ձևակերպվել է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրվել է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություններ:

Կանխարգելվել և կասեցվել է ինքնակամ շինարարություն և օրենքով սահմանված կարգով ապահովվել է դրանց հետևանքների վերացումը:

Կազմակերպվել և պատշաճ կերպով համայնքում իրականացվել է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը:

Համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան՝ տրվել է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություններ:

2. Սոցիալական պաշտպանության բնագավառում

Համայնքում թվով 76 անապահով ընտանիքներին ինչպես նաև ԼՂՀ պատերազմում զոհված և անհայտ կորածների թվով 30 ընտանիքներին տրամադրվել է դրամական աջակցություն:

### 3. Ֆինանսների բնագավառում

համայնքի ավագանու հետ քննարկվել և կազմվել է համայնքի բյուջեն, դրանում առաջարկվող փոփոխությունները, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատողների հաստիքացուցակների վերաբերյալ որոշումներ, համաձայն որի ավելացել են աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը:

Ապահովվել է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացվել համայնքի ավագանուն.

Ավագանու հաստատմանն է ներկայացվել տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը:

Կազմակերպվել է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի, գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Օրենքով սահմանված կարգով ապահովվել է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը:

### 4. Առևտրի և ծառայությունների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով իրականացվել է հսկողություն Համայնքի վարչական տարածքում առևտրի և հանրային սննդի ոլորտում.

Ներկայացված հայտերի հիման վրա տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, համայնքի տարածքում բացօթյա առևտրի, հանրային սննդի կազմակերպման և իրացման, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվություններ.

### 5. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Ըստ կարգի իրականացվել է քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ նրանցից ստացված դիմումների և առաջարկությունների ուղղությամբ:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքի արդյունքում օրենքով սահմանված կարգով ըստ դիմումների ընդունվել են համապատասխան որոշումներ՝ սահմանվել են խնամակալներ կամ հոգաբարձուներ:

### 6. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում

Համայնքի բնակիչների համար ստեղծվել է պայմաններ իրազեկ լինելու համայնքապետարանի աշխատակազմի գործունեության մասին՝ համայնքի ավագանու նիստերը ինչպես նաև հանրային քննարկումները համայնքի պաշտոնական կայքում ուղիղ հեռարձակելու միջոցով, ինչպես նաև տեղադրվել են համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած որոշումները, համայնքի 2018 թվականի բյուջեն, բյուջեի կատարման եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ տեղեկություններն ու հայտարարությունները

Կազմակերպվել է համայնքի բնակիչների մասնակցությունը ավագանու նիստերին և հանրային քննարկումներին:

## 7. Պաշտպանության կազմակերպման բնագավառում

Սահմանված կարգով իրականացվել է համայնքի զինապարտների գրանցամատյանի վարումը:

Զինապարտ քաղաքացիների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակչության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել է տարածքային զինվորական կոմիսարիատ,

Տարածքային զինվորական կոմիսարիատ է ներկայացվել նաև իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ գրավոր տեղեկություններ:

## 8. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում

Համայնքի ղեկավարը արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում կազմակերպել է միջոցառումների պլանավորում և իրականացում.

Իրականացվել է արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում:

Ստեղծվել է քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար նոր ուժեր՝ կազմվել է համայնքի քաղաքացիական պաշտպանության նոր պլանը, ստեղծվել է քաղաքացիական պաշտպանության նոր կազմավորումներ, տարահանման հանձնաժողով և հաստատվել է տարահանման պլանը: Ինչպես նաև ստեղծվել է համայնքում աղետների ռիսկերի կառավարման համակարգ, կազմվել է աղետների ռիսկերի կառավարման պլան:

## 9. կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված համայնքում կազմակերպվել են տեարն ընդառաջի, մայրության և գեղեցկության օրվա, եղեռնի, երեխաների պաշտպանության, նոր ուսումնական տարվա, անկախության օրվա, ամանորի և այլ միջոցառումներ: Մշակույթի տանը կազմակերպվել է նաև գեղանկարչության ցուցահանդես, իսկ ամառային արձակուրդներին համայնքի երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է ամառային ճամբարներ:

## 10. Համայնքի ղեկավարի լիազորությունները առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

2018 թվականի ընթացքում համայնքում կազմակերպվել են սպորտային տարբեր միջոցառումներ, այդ թվում մարզական փառատոն, որում ներկայացվել են հետևյալ սպորտաձևերը՝

շախմատ, նարդի, ազգային կոխ, ըմբշամարտ, բազկամարտ, կշռաքարի բարձրացում, մինի ֆուտբոլ, մասսայական վազքարշավ և այլն